

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԼԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Կատարող», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է իրականացնել Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքով պայմանավորված գիտական հետազոտությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքն ու վճարել դրա համար:

1.2. Կողմերը պարտավոր են ապահովել սույն պայմանագրի առարկային, դրա կատարման ընթացքին և ստացված արդյունքներին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

1.3. Գաղտնի ճանաչված տեղեկությունների ծավալը սահմանված է թիվ _____ հավելվածում:

1.4. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է աշխատանքները կատարելիս ստացված և գաղտնի ճանաչված տեղեկությունները հրապարակել միայն մյուս կողմի համաձայնությամբ:

1.5. Աշխատանքի բովանդակությունը և աշխատանքի փուլերի կատարման ժամկետները որոշվում են օրացուցային պլանով և տեխնիկական առաջադրանքով (հավելված _____):

1.6. Աշխատանքի ընդունումը կատարվում է տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կատարողից պահանջել աշխատանքները կատարել սույն պայմանագրի 4-րդ կետում նշված ժամկետում:

2.1.2. Կատարողից պահանջել կատարել սույն պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտականությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Կատարողին անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն տրամադրել աշխատանքների կատարման վերաբերյալ:

2.2.2. Ընդունել կատարված աշխատանքների արդյունքը և _____ օրվա ընթացքում վճարել դրանց համար:

2.2.3. Վճարել կատարված աշխատանքի համար մինչև արդյունքներն ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կատարողից անկախ հանգամանքների բերումով:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1. գիտական հետազոտություններն իրականացնել անձամբ կամ պատվիրատուի համաձայնությամբ աշխատանքների կատարման մեջ ներգրավելով երրորդ անձանց:

2.3.2. աշխատանքները կատարել Պատվիրատուի հետ համաձայնեցված տեխնիկական առաջադրանքին համապատասխան և դրանց արդյունքները Պատվիրատուին հանձնել սույն պայմանագրի _____ կետում նշված ժամկետում:

2.3.3. վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տրված այն թերությունները, որոնք կարող են հանգեցնել տեխնիկական առաջադրանքում նախատեսված տեխնիկական, տնտեսական պարամետրերից շեղումների (թիվ _____ հավելված):

2.3.4. Պատվիրատուին անհապաղ տեղեկացնել աշխատանքների սպասվելիք արդյունքների ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին:

2.3.5. Պատվիրատուին երաշխավորել այլ անձանց բացառիկ իրավունքները չխախտող պայմաններով ստացված արդյունքների հանձնումը:

3. Աշխատանքի գինը և վճարման կարգը

3.1. Գիտահետազոտական աշխատանքների գինը, ըստ գնի մասին համաձայնության արձանագրության (թիվ _____ հավելված), կազմում է _____ (_____) դրամ, որից _____ (_____) դրամը Պատվիրատուն վճարում է նախօրոք՝ որպես կանխավճար:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրվելու օրվանից և գործում է մինչև « _____ » _____ թ.:

5. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը

5.1. Չևակերպման ենթակա գիտական, տեխնիկական և մյուս փաստաթղթերի ցանկը և Կատարողի կողմից դրանք հանձնելու ժամկետը որոշվում են տեխնիկական առաջադրանքով և օրացուցային պլանով:

5.2. Աշխատանքի ավարտելուց հետո Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման- ընդունման երկկողմ ակտ:

5.3. Աշխատանքը ժամկետից շուտ ավարտվելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի ժամկետից շուտ ընդունել աշխատանքը և վճարել դրա համար:

5.4. Իրականացված աշխատանքի նկատմամբ պահանջները Պատվիրատուն ներկայացնում է երկկողմ ակտը ստանալուց հետո՝ _____ (_____) օրվա ընթացքում: Կատարողին ուղարկվում են դիտողությունների ցանկը և դրանք վերացնելու ժամկետների մասին հաղորդումը: Այդ դեպքում հանձնման-ընդունման ակտն ստորագրվում է թերությունները վերացնելուց հետո:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունները Կատարողի կողմից լրիվ ծավալով չկատարելու դեպքում Պատվիրատուն վճարում է կատարված գիտական աշխատանքի միայն այն մասի արժեքը, որը համապատասխանում է տեխնիկական առաջադրանքի պահանջներին:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում Կատարողը _____ ժամկետում չկատարված աշխատանքին համամասնական չափով, Պատվիրատուին է վերադարձնում ստացված միջոցները, ինչպես նաև՝ վճարում է տուգանք՝ պայմանագրով չկատարված աշխատանքի արժեքի գումարի _____ (_____) տոկոսի չափով:

7. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1. Կատարողն իրավունք չունի Պատվիրատուին որպես հաշվետվություն, ներկայացնել մյուս կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքները:

9.2. Կատարողն իրավունք չունի, առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության, այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

9.3. Սույն պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ դրա գործողության դադարեցումն իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

9.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պայմանագրի անբաժանելի մասն են՝

1. Տեխնիկական առաջադրանքը (հավելված _____)
2. Օրացուցային պլանը (հավելված _____)
3. Պայմանագրային գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված _____):

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

ստորագրություն

Կատարող

ստորագրություն